

EPREUVE ECRITE DE LANGUE VIVANTE

ARMENIEN

DUREE : 2 heures – COEFFICIENT : 2

L'utilisation d'un dictionnaire bilingue est autorisée

Գարեգին Բես
(«Յուշանովելներ», Երեւան, 1985)

Նարսանեկան հանդէսը իր գագաթնակէտին հասած էր, ծերերուն բարեմաղթութիւնները¹ կը խեղդուէին երիտասարդներուն ուրախ կանչերուն եւ երաժշտութեան մէջ:

5 Մարիամ մեծ մայրիկը, կռթնած իր ձեռնաւիայտին, հայեացքը ուղղած էր թռռնիկին՝ Մելանիային եւ անոր սիրած տղուն: Մեծ մայրիկը ուրախ էր, որ անոնք սիրով կը սկսէին իրենց համարել կեանքը, տխուր էր, որ իր սէրը անցեալին արհամարհուած² էր իր սիրած տղուն կողմէ եւ իրեն երջանկութիւն չբերաւ:

– Թոյլ տուէք հարցում մը ուղղեմ աղջկան ծնողներուն, ուրախութեան աղմուկին մէջէն լսուեցաւ ձայն մը:

10 Տղուն մեծ հայրիկն էր, Սուքիաս քեռին:

– Ես նախօրօք կ'ուզեմ գիտնալ թէ ի՞նչ հարստութեան տէր է ձեր աղջիկը, ընդհանուր տարակուսանքին³ մէջ հնչեց մեծ հայրիկին ձայնը, թէ հետը ի՞նչ պիտի տաք, տղուն՝ թռռնիկիս:

Տղուն եւ թռռնիկին դէմ քերուն անմիջապէս երեւաց ամօթի կարմրութիւնը:

15 – Մտիկ ըրէ՛ք, կրկնեց մեծ հայրիկը, շուտով պիտի հասկնաք ըսածս:

Երկար լռութիւն մը տիրեց եւ թուաց թէ երբեք կարելի չէ զայն խախտել:

– Մեր հարստութիւնը, շուարած կմկմաց աղջկան հայրը, – միմիայն մեր դուստրն է, մեր աղջկան հարստութիւնը իր սիրտն ու սէրն է, որ կու տայ թռռնիկիդ: Ուրիշ հարստութիւն չունինք մենք:

20 – Ճիշդ այդ կ'ուզէի իմանալ, հանգիստ ձայնով ըսաւ մեծ հայրիկը: – Եթէ ամուսնացողներուն հարստութիւնը իրենց սէրն է, ըսել է, որ անոնք երջանիկ պիտի ըլլան:

25 Մարիամ մեծ մայրիկին աչքին մեծ հայրիկը յանկարծ սկսաւ երիտասարդանալ եւ իր առջեւ ժամանակին սիրած տղան երեւաց, որուն աղքատութիւնը խլած էր իրմէ:

¹ բարեմաղթութիւն - vœux de bonheur

² արհամարհել - mépriser, dédaigner

³

– Երիտասարութեանս ես ալ աղջիկ մը սիրեցի, շարունակեց մեծ հայրիկը: –
Է՛հ, առաջ այդպէս չէր, հազարէն մէկը սիրելով կ'ամուսնանար:

Խնամախօսներ⁴ գացին այդ աղջկան գիւղը: Պարզուեցաւ, որ անոնք
հարուստ չեն եւ հայրս չհամաձայնեցաւ աղջկան ուզել ինձի համար եւ հարուստ
30 աղջկան մը հետ ամուսնացայ:

Մեռածներուն մասին չար չխօսինք, ըսեմ միայն, որ ընտանեկան
երջանկութիւն չրեսայ, բան մը, որ թերեւս այն աղջկան հետ տեսնէի:

Travail à faire par le candidat

I - COMPREHENSION (12 points)

1. Traduisez de « Է՛հ, առաջ » (ligne 27) jusqu'à « ... այն աղջկան հետ տեսնէի: » (ligne 32)
2. Pourquoi l'amour de Mariam n'est-il pas payé de retour?
3. Comment le grand-père Soukias explique-t-il le bonheur familial ?

II. EXPRESSION

1 – Expression (4 points)

1. Մեծ հայրիկին խոստովանութիւնը որո՞ւն ուղղուած էր եւ ինչո՞ւ:
2. Ի՞նչ հարստութեան մասին կը խօսէր Մելանիային հայրը:

2 – Production semi-guidée (en arménien) (4 points)

Pourriez-vous inventer l'histoire d'amour de la grand-mère Mariam et du grand-père Soukias?

⁴ խնամախօս - entremetteur d'un mariage